ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 1230-Ն	*Տեսակը*	Պաշտոնական Ինկորպորացիա
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2018.09.26/71(1429) Հոդ.1002	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ընդունման ամսաթիվը*	19.09.2018
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	19.09.2018
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	27.09.2018	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ
Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի N 1087-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 սեպտեմբերի 2018 թվականի N 1230-Ն

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի N 1087-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասը և պետական կառավարման համակարգի մարմինների և տարածքային կառավարման մարմինների պաշտոնատար անձանց՝ օտարերկրյա պետություններ գործուղումների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝

1. Հաստատել օտարերկրյա պետություններ գործուղումների կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել գործուղման արդյունքների մասին հաշվետվության օրինակելի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վարչապետի 2013 թվականի նոյեմբերի 26-ի «Հանրապետական գործադիր մարմինների և տարածքային կառավարման մարմինների ներկայացուցիչների՝ արտասահման գործուղումների մասին» N 1087-Ն որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ն. Փաշինյան**

2018 թ. սեպտեմբերի 19
Երևան

Հավելված N 1
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ

1. Սույն կարգով սահմանվում են պետական կառավարման համակարգի մարմինների, տարածքային կառավարման մարմինների պաշտոնատար անձանց՝ օտարերկրյա պետություններ գործուղումների իրականացման գործընթացները:

2. Սույն կարգի 5-րդ կետը չի տարածվում դիվանագիտական ծառայության մարմինների, ազգային անվտանգության ծառայության և պաշտպանության նախարարության պաշտոնատար անձանց գործուղումների վրա:

(2-րդ կետը խմբ. 05.06.19 N 707-Ն)

3. Փոխվարչապետի, պետական կառավարման համակարգի մարմնի ղեկավարի կամ նրա տեղակալի (բացառությամբ՝ նախարարության ենթակա մարմնի ղեկավարի տեղակալի), պաշտպանության և արտաքին գործերի նախարարությունների գլխավոր քարտուղարների, ինչպես նաև ազգային անվտանգության ծառայության տնօրենի աշխատակազմի ղեկավարի, մարզպետի կամ նրա տեղակալի՝ օտարերկրյա պետություն նախատեսվող գործուղման վերաբերյալ վարչապետի որոշման նախագիծը առնվազն 15 օր առաջ ներկայացվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ՝ համաձայնեցված արտաքին գործերի նախարարության, իսկ պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին գործուղվելու պարագայում՝ նաև ֆինանսների նախարարության հետ: Գործուղման վերաբերյալ վարչապետի որոշման նախագծին կից ներկայացվում են նաև գործուղման հրավերը, դրա թարգմանությունը, միջոցառման օրակարգը և մասնակցության անհրաժեշտության հիմնավորումը: Հիմնավորման մեջ ներկայացվում է մանրամասն տեղեկատվություն ակնկալվող արդյունքների, ինչպես նաև միջոցառմանը չմասնակցելու պարագայում՝ բացասական ազդեցության մասին: Պատվիրակության գործուղման դեպքում՝ ներկայացվում է պատվիրակության կազմում ընդգրկված յուրաքանչյուր անդամի դերակատարությունը:

(3-րդ կետը լրաց. 05.06.19 N 707-Ն)

4. Պաշտոնատար այլ անձանց՝ օտարերկրյա պետություն գործուղումն իրականացվում է գործուղման մեկնելուց առնվազն 5 օր առաջ արտաքին գործերի նախարարությանը տեղեկացնելուց հետո՝ տվյալ մարմնի ղեկավարի կամ աշխատակազմի ղեկավարի կողմից ընդունված համապատասխան իրավական ակտի հիման վրա:

5. Սույն կարգի 4-րդ կետում նշված անձանց՝ օտարերկրյա պետություն գործուղումը պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին իրականացնելու պարագայում կիրառվում են սույն կարգի 3-րդ կետի պահանջները:

6. Սույն կարգի 3-րդ և 5-րդ կետերով նշված դեպքերում գործուղումն իրականացվում է վարչապետի համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելուց հետո: Բացառիկ դեպքերում (վարչապետի ցուցման կամ գործուղման վերաբերյալ հրավերն ուշ ստանալու դեպքում)՝ գործուղումն իրականացվում է վարչապետի կողմից բանավոր համաձայնության պարագայում՝ նախքան համապատասխան որոշման ընդունումը:

7. Վարչապետի աշխատակազմը գործուղման վերաբերյալ որոշման նախագծի փաթեթը նախապատրաստում և ներկայացնում է վարչապետի հաստատմանը: Վարչապետի կողմից գործուղումը ոչ նպատակահարմար համարվելու դեպքում՝ գրավոր տեղեկացնում է համապատասխան մարմնի ղեկավարին:

8. Սույն կարգի 3-րդ կետում նշված կարծիքները արտաքին գործերի և ֆինանսների նախարարությունները համապատասխան մարմնին են տրամադրում եռօրյա ժամկետում:

9. Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ներկայացվող՝ վարչապետի որոշման նախագծերում պաշտոնական գործուղումների համար նախատեսվում է ոչ ավելի, քան 3 օր, հեռավոր երկրների կամ առանձին բացառիկ դեպքերում՝ 5 օր:

10. Գործուղումից վերադառնալուց հետո եռօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն, իսկ վարչապետի որոշմամբ գործուղվելու դեպքում՝ նաև վարչապետի աշխատակազմ է ներկայացվում գործուղման արդյունքների մասին հաշվետվությունը՝ համաձայն N 2 հավելվածի:

11. Վարչապետի աշխատակազմը եռօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության www.e-gov.am կայքէջի «Գործուղումների հաշվետվություններ» բաժնում հրապարակում է վարչապետի աշխատակազմ ներկայացված հաշվետվությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվետվությունը պարունակում է պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնի տեղեկություններ:

12. Սույն կարգի 11-րդ կետում նշված՝ հրապարակման ոչ ենթակա տեղեկություններ պարունակելու դեպքում՝ ներկայացնողի կողմից հաշվետվության առաջին էջի վերևի մասի աջ անկյունում պարտադիր նշվում է «Հրապարակման ենթակա չէ» գրառումը:

(հավելվածը խմբ., լրաց. 05.06.19 N 707-Ն)

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ն. Փաշինյան

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

Օրինակելի ձև

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը.

2. Զբաղեցրած պաշտոնը.

3. Գործուղման վայրը և ժամկետները.

4. Հրավիրող կողմը.

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

6. Քննարկված թեմաները.

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ն. Փաշինյան